ՔՍԱՆԵՎԵՑԵՐՈՐԴ—ՏԱՐԻ—ԹԻՒ—2039—ՇԱԲԱԹ—15—ՀՈԿՏԵՄԲԵՐ—Ն. Տ.—27—ՀՈԿՏԵՄԲԵՐ—1877

ԳԱՅՄԱՆԸ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 մկ.
» » Գաւառաց » 10 մկ.
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 4 մկ.
» » Գաւառաց » 5 մկ.
Ծանուցման առաջ մէկ անգամի համար 3 զուրուշ, երկու անգամի համար 2 զուրուշ, աւելի անգամներու համար զատ տակարկութիւն կը լայ։

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳԱՅՄԱՆԸ

Դուրս գացած լրագրաց ճանրաձախքը խմբագրութեան վրայ է։

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն խմբագիրը—Ցնորէնին պիտի ուղղուի։ Գալատիա Սանտրքճրլար Ճատատէսի թիւ 198, Նօրս խան, Մասխի գրասենեակը։

Ճանրաձախքը չվճարուած նամակ չընդունուիր։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 15 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ասիոյ բանակին վրայ տակաւին պաշտօնական լուր չկար մեր գրած միջոցին, սակայն երեքշաբթի օրը Պրինտիզիի շոգենաւով եկած Ամէնքի լրագրիրք Կորչաքով իշխանին Պուքրէշէն հոկտ. 3/17 թուով առ Ամէնքի Ռուսաց դեսպանն ուղղած հետեւեալ հեռագիրը կը հրատարակեն.

“Ահմէտ Մուխթար փաշայի բանակին մէկ մասն յաղթուելով ցրուեցաւ քանի մը հազար դերի և չորս թնդանօթ թողլով։ Միւս մասն որ երեք զօրաբաժնէ կը բաղկանար և երեսունեւհինգ թնդանօթ ունէր, պաշարեցաւ և հոկտ. 3/15ին անձնատուր եղաւ վեց փաշայով։ Թուրքաց կորուստը խիստ մեծ է։ Մուխթար փաշա կարս ապաստանեցաւ։”

Դարայալի Ռուսաց բանակէն եղած ուրիշ հեռագիր մ’ալ այս լուրը կը կրկնէ։

Թուրք լրագրաց տուած տեղեկութեանց նայելով՝ Ռուսք Իսմայիլ Հագդի փաշայի բանակին վրայ ալ յարձակեր՝ բայց մեծ կորուստով ետ մղուեր են։

Լէվընթ Հերբլա լրագրին Կարնոյ թղթակիցը Մուխթար փաշայի բանակին այցելութիւն մը տալէ ետք՝ ըստ նոր տումարի հոկտ. 1, 2, 3 և 4ի օրերուն վրայ տեղեկութիւններ կուտայ, որք թէ և իրենց ներկայ կարեւորութիւնը կորուսած են, բայց պատերազմին պատմութիւնը կատարեալ դիտնալու համար արժանի են նկատողութեան։

Սեպտեմբերի մէջ Ռուսաց կեդրոնական բանակին 52 վաշտ հեռեւակէ, և 11 դունդ հեծելազօրէ կը բաղկանար 120 թնդանօթով։ Այն ատեն Միքայէլ մեծ դուքսն օգնութեան կ’սպասէր, որ սեպտ.ի վերջն հասաւ և կը բաղկանար 16 վաշտ հեռեւակէ, Մոսքուայի հրացանաձիգ զօրքերէն, 6 վաշտ Երեւանէն և 4 վաշտ Արտահանէն։ Ըստ Տէյլի Նիւզի թղթակցին, որ Բարայալի Ռուսաց բանակէն սեպտ. 15/27 թուով կը գրէ, հասած օգնութիւններն ամբողջ երկու զօրաբաժին էին, լաւ զինեալ, լաւ հագուած և լաւ երեւոյթով երիտասարդներ, զորս Միքայէլ մեծ դուքսն աչքէ անցուներլով խիստ գոհացուցիչ գտեր է։ Իսկ ըստ Լէվընթ Հերբլայի թղթակցին, ասոնցմէ զատ 9 դունդ հեծելազօր և եօթանասուն երկու թնդանօթք ալ հասած էին։ Ուստի յարձակումէն առաջ Ռուսաց բոլոր զօրութիւնն 78 վաշտ հեռեւակ, 16 դունդ հեծելազօր և 192 թնդանօթ էր։ Ռուսաց աջ թեւը Բարայալէն Քիւրէք-Ցէրէ կը տարածէր, և կը բաղկանար 38 վաշտ հեռեւակէ, 10 դունդ հեծելազօրէ և 88 թնդանօթէ։ Կեդրոնն՝ որ 23 վաշտ հեռեւակ, 3 դունդ հեծելազօր և 70 թընդանօթ ունէր, Էօքիւզլիւ, Համիտ Քիւլէք և Պայրաքտար գեղերը բանակած էր։ Զախ թեւն 3 վաշտ հեռեւակով, 1 դունդ հեծելազօրով և 10 թնդանօթով իւչ Թէփէի բարձանց վրայ էր՝ Օսմանեան յառաջապահներէն հինգ քիլոմէթր հեռի։ Կեդրոնին ետեւի կողմն ալ 3 վաշտ հեռեւակազօր բլուրի մը վրայ կեցած էր։ Քօմարօֆի զօրավարին զօրագունդն Սրփա—Զայի (Ախուրեան) ձախ կողմն էր Նախջաւանի բարձանց վրայ, և կը բաղկանար 7 վաշտ հեռեւակէ, 2 դունդ հեծելազօրէ և 12 թնդանօթէ։

Օսմանեան զօրաց դիրքերն էին Քիւչիւք Եահնիլէր, ձախ թեւին առաջին գիծը, 6 վաշտ հեռեւակ և 16 թնդանօթ։ Պէօյիւք Եահնիլէր 4 վաշտ իբրև յառաջապահ։ Լէվլիա Թէփէի վրայ չորս վաշտ։ Վէզլին քէօյի բարձանց վրայ ութ վաշտ և 16 թընդանօթ Ահմէտ Ֆազըլ փաշայի հրամանաց ներքև։ Զորս վաշտ ալ Կարսի մէջ, որք կանչուած ժամանակ օգնութեան պիտի երթային։ Ամբողջ ձախ թեւը 22 վաշտ հեռեւակ և 32 թնդանօթ էր։ Օսմանեան զօրաց կեդրոնը Հաճի Վէլի և Սուպաթան կը գտնուէր, և ասոր առաջին զօրաբաժինը Չերքէզ Մուսա փաշայի հրամանաց ներքև էր 12 վաշտ հեռեւակազօրօք և 12 թնդանօթով։ Աջ թեւը Շեվքէթ փաշայի հրամանաց ներքև Թայնալը դիւղն էր 12 վաշտ հեռեւակաւ և 18 թնդանօթով, և ասոր մէկ վաշտը Թաշ-Թէփէի վրայ յառաջապահ կարգուած էր։ Օսմանեան հեծելազօրաց մեծ մասն աջ թեւին առջև բանակած էր։ Էօմէր փաշայի հրամանաց ներքև եղող զօրաբաժինը Գըզըլ-Թէփէն գրաւած էր 12 վաշտով և 16 թնդանօթով։ Օսմանեան բանակին եկած օգնութիւնները պահեստի զօրաբաժին մը կազմէին, և արդէն 7 վաշտ հեռեւակի և 14 թնդանօթի հասած էին։ Նախջաւանի առջև գնդապետ Ահմէտ Մուխթար պէյին հրամանաց ներքև 3 վաշտ հեռեւակ, 1000 հեծելազօր և 4 թընդանօթ կային։

Հոկտ. 1ին երկուշաբթի օրն արշալուսոյ ժամանակ Ռուսք Օսմանեանց աջ թեւին՝ Թաշ-Թէփէի և Ճալայի դիրքերուն վրայ յարձակեցան։ Երկու ժամ սաստիկ պատերազմ եղաւ և ետ մղուեցան։ Քօմարօֆի զօրախումբը Նախջաւանի Ահմէտ Մուխթար պէյին գունդին դէմ յառաջացաւ. Ռուսք երեք անգամ Օսմանեան ամրութիւններուն մինչև 40 քայլ մօտեցան, բայց ետ մղուելով Արփա-Զայի կողմը քաշուեցան, ուր մինչև իրիկուն իրենց դիրքը պահեցին, և դիշերն Ահմէտ Մուխթար փաշային Ալաճա-Ցաղի դրից դէմ քալեցին։ Այս առաջին օրը Միւշիւրը 7 զօրական հրացանի բռնել տուաւ, վասն զի փատաբար ’ի փախուստ դարձած էին։ Ամեն զօրաբաժնի մէջ մէկ մէկ մարդ մահուամբ պատժուեցան յօրինակ այլոց։ Այս զինուորները կէտիկլերի պատերազմին մէջ Գըզըլ-Թէփէի վրայ յարձակող վաշտէն ողջ մնացած 72 զօրականներէն էին, որոց Մուխթար փաշա զինուորական շքադրամ բաշխած էր։

Նոյն դիշերը Սուպաթանի առջև Ռուսաց որսորդ զօրքերն հրացան կը պարպէին, և մերթ ընդ մերթ ալ խմբովին կրակ կընէին։ Մուխթար փաշա հասկցաւ որ Ռուսք պատերազմական դաւ մը կը խորհէին, բայց ինք ալ պատրաստ կեցած էր։ Երեքշաբթի առաւօտ տեսնուեցաւ որ 36 վաշտ հեռեւակ և 4 դունդ հեծեալ Ռուսական զօրք 82 թնդանօթով Քարայալի և Եահնիի միջեւը դումարուած էին. ասոնցմէ 10 վաշտ հեռեւակ և 30 թնդանօթ Գըզըլ-Թէփէի վրայ յարձակեցան, և Էօմէր փաշայի զօրաց հետ թնդանօթի կռիւ մ’սկսաւ. բայց Օսմանեան զօրաց խոշոր թնդանօթները թշնամին չթողուցին որ մօտ դար։ Զորս վաշտ Ռուսք 24 թնդանօթով և հեծելազօրօք Հաճի Վէլի գիւղին առջև կը կենային և ուրիշ Ռուսաց դունդ մ’ալ Քիւչիւք-Եահնին կը դիտէր։ Ռուսաց կեդրոնն երեսուն վաշտով և ութսուն թնդանօթով Մեծ Եահնիլերի դէմ քալեցին։ Օսմանեան յառաջապահք այս ահագին զօրութեան առջև ետ քաշուեցան և գնացին Քիւչիւք-Եահնիլերի վրայ (Բրուսկացի) Գափտան Ահմէտ փաշայի զօրաց հետ միացան։ Միւս մասն ալ Էվլիա-Թէփէ քաշուեցաւ։ Ռուսք Մեծ Եահնիլերն առնլով իսկոյն ամրութիւններ չինել կ’սկսին, և հոն 4 վաշտ հեռեւակ, դունդ մը հեծեալ և 16 թնդանօթ թողլով իրենց մնացեալ զօրութեամբ Փոքր-Եահնիի վրայ կը յարձակի՝ արդէն անոր առջև կեցող իրենց դունդին հետ միանալով։ Օսմանեան զօրքը սաստիկ կը դիմադրէ, կէս օրէն ժամմ’առաջ Օսմանեան զօրքն իրենց առաջին դիծերը թողուլ կը պարտաւորին. բայց Հաճի Վէլիէն, Սուպաթանէն և Վէզլին-քէօյէն օգնութիւն կը հասնի։ Ռուսք երեք անգամ Օսմանեան ամրութեանց վրայ կը յարձակին՝ բայց ետ կը մղուին, և միայն հոն ութ ինն հարիւրի չափ կորուստ կուտան. Օսմանեան զօրքն ալ հինգ հարիւրի չափ մարդ կը կորուսանէ։

Այս միջոցին Ռուսք Օսմանեան բանակէն կարս բանող հեռագրական թելը կը խզեն, և իրենց հեծելազօրն ա՛յնչափ կը մերձենայ Կարսի ամրութեանց, որ մարտակոյներէն թնդանօթ նետել հարկ կըլլայ զանոնք հալածելու համար։ Քօմարօֆի զօրախումբն Ալաճա Ցաղի բարձանց վրայ Օսմանեան աջ թեւին դէմ յանկարծ կը յարձակի, և հոն մնացած դումարտակ մը որ կերակուր կեփէր, կը փախչի, և իրենց ապայն կը մեռնի։ Իրիկուան դէմ Բէննէքէն 6 վաշտ զօրք և 6 թնդանօթ կը հասնին գնդապետ Հասան պէյին հրամանաց ներքև։ Միւշիրը Լիվա Հիւսէյին փաշան Ալաճա Ցաղ կը զրկէ Ռուսերն հալածելու համար, որք մինչև Արփա Զայ կը քաշուին, և իրենց ճանապարհը Նախջաւանի կողմը գտնուող Օսմանեան զօրքէն չկտրուելու համար՝ հապճեպով կը փախչին 200 մարդ կորուստ և 41 դերի տալով. իսկ Օսմանեան զօրքն այն կողմն 100 կորուստ ունեցան։ Եահնիի պատերազմին մէջ Ֆէրիք Ահմէտ Ֆազըլ փաշան ազդրէն վիրաւորուեցաւ։ Դիշերը պատերազմող բանակներն իրենց դիրքերը կեցան։

Չորեքշաբթի օրը Ռուսք զինուորական շարժումներ կընեն Գապաք Թէփէի կողմը՝ Կարսէն Ալեքսանդրաբոլ դնացող ճանապարհին վրայ։ Մերթ ընդ մերթ թնդանօթի կարձակեն։ Օսմանցիք ալ իրենց դիրքերը կը զօրացնեն, իւչ Թէփէն կը դիտեն, Գըզըլ-Թէփէի և Սուպաթանի կողմը կը համախմբին, և Ռուսաց գրաւած մեծ Եահնիլերի վրայ յարձակման կը պատրաստուին։ Ռուսք կէս օրէն չորս ժամ եւ 36 վաշտով և 100 թնդանօթով Սուպաթանի և Հաճի Վէլիի վրայ կը յարձակին։ Իրիկուան դէմ Չերքէզ Մուսա փաշա Ռուսաց ձախ կողին վրայ յարձակելով ճակատամարտը կը վճռէ։ Էօմէր փաշա թընդանաձիգն ետեւի կողմէն քանի մը վաշտ հանելով անոր յետս նահանջումը կարել կ’սպառնայ։ Ռուսք շուտով Գապաք-Թէփէ և Գարայալ կը քաշուին 1600 կորուստ և 150 դերի տալով. իսկ Օսմանեան զօրքն 500 հոգի միայն կը կորուսանէ։ Երկու բանակները պատերազմական դիրքի վրայ կը կենան նոյն դիշերը։

Հինգշաբթի օրը, 4 հոկտ. Օսմանեան զօրքը մեծ Եահնիլերն ետ առնլու կերթայ, բայց հոն գտնուող Ռուսք իսկոյն ետ կը քաշուին առանց կռուելու։ Օսմանեան զօրքը մեծ Եահնիլերն առնլով կը համախմբի և Գապաք-Թէփէի վրայ կը քալէ և սաստիկ թնդանօթի կռիւ մը կըլլայ։ Ռուսք իրենց առաջին դիծերը կը թողուն և Գապաք-Թէփէի ամրութիւնները կը քաշուին՝, բայց Օսմանեան զօրքը չյարձակիր։ Այս չորեքօրեայ պատերազմաց մէջ Ռուսք 9—10000 հոգի և Օսմանցիք 4000 մարդ կորուսած էին, երկու կողմէն առանց արդիւնքի։

Պրինտիզիի վերջին շոգենաւով եկած Եւրոպական լրագրաց մէջ հետեւեալ լուրերը կը տեսնուին։

Վիեննա 16 Հոկտ.

Դանուբի վրայ դանուող Ռուսորումանական նաւախումբը կը բաղկանայ երեք մանր զրահաւորներէ (մոնիթոր), 17 անուաւոր շոգենաւէ, 9 պտուտակաւորէ և 25 ալ ծովային ական կրող մանր շոգենաւէ։

Բեղրսպուրկ 19 Հոկտ.

103 վաշտ պահեստի զօրք պատրաստուեցան և քիչ օրէն պատերազմին ասպարէզը պիտի երթան։

Ուրիշ նոր վաշտեր ալ կազմուելու վրայ են։

Գերմանական Թակպլաթ լրագրին մէջ հրատարակեալ հեռագրի մը խօսքին նայելով, կարսի վերջին ճակատամարտին մէջ 30,000 Օսմանեանց դէմ 70,000 Ռուս կային, որք Հէյման, Ռօսի և Լազարէֆ զօրավարաց հրամանատարութեամբ երեք զօրաբանակի բաժնուած էին։

Ռուսական ապրիւրէ եկած հեռագիր մ'ալ կը ծանուցանէ թէ յիշեալ ճակատամարտին մէջ դերի ինկած եօթն փաշաներուն մէջ են Շէյխ Շամիլի երկու որդիքը, Կազի Մէհմէտ փաշա և Շէֆքի պէյ, որք Կովկասու ապստամբութեան գլխաւոր թելադիրներն են եղեր։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Դանուբեան բանակին հրամանատար Միւլէյման փաշայէն Հոկտ. 12/24 թուով հեռագիր մը կը ծանուցանէ թէ քանի մը Ռուսական զօրաբաժին մինչև Ռուսճուգ յառաջանալու փորձ փորձեր, բայց Օսմանեան զօրաց բուռը դիմադրութեան հանդիպելով ետ մղուեր են 800ի չափ մարդ կորուսանելով։ Իսկ Օսմանեան զօրաց կորուստն եղեր է 200ի չափ մեռեալ ու վիրաւոր։

Նոյն թուականաւ Օրխանիէի հրամանատար Շէվքէթի փաշայէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ռուսք Թիմիշի վրայ յարձակելով ետ քշուեր են, բայց Թիմիշի և Ցօպնիքի մէջ տեղի հեռագրական գիծերը խզեր են։

Դարձեալ նոյն թուականով Կազի Ահմէտ Մուխթար փաշայէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ նոյն օրը Ռուսերն երեք դուռնդ հեծելազօրք և քանի մը թնդանօթով Միլիտիւղէն դէպի Զիվինգիւղ յառաջացած ժամանակ Մուխթար փաշան իւր բռնած կիճուրի գիրքէն անոնց վրայ յարձակեր, և ժամ չորսէն մինչև տասը կռուելով զանոնք ետ մղեր և ժամու կէսի չափ ալ անոնց ետևէն իյնալէ ետև՝ իրիկուան մութը կոխած ժամանակ կիճուր վերադարձեր է։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պէրլին 24 Հոկտ.

Կէս պաշտօնական թերթերը կը յայտնեն թէ Գերմանիա՝ Դաղղիոյ մէջ աղատամիտ հանրապետութեան մը վրայ մի այն կրնայ վստահ ըլլալ։

Վիեննա 25 Հոկտ.

Ռումանիոյ կառավարութիւնը պաշտօնապէս ներուժ խնդրեց մեր կառավարութենէն՝ այն սպառնան համար որով ծանուցեր էր թէ Հունգարացիք Ռումանիոյ հողը քաղեր են։ Ռումանիոյ կառավարութեան պաշտօնագիրն՝ ընդհակառակն՝ պոռութեամբ կը վկայէ Աւստրիոյ Հունգարիոյ կանոնաւոր ընթացից։

Պուքրէշ 25 Հոկտ.

Լայթիթնպէրկի Սէրժ իշխանաղունը վերջին օրերս Պուլղարիոյ մէջ զինուորական հեռադրութիւն մ'ըրած ժամանակ ճակատէն զարնուելով մեռաւ։

Մարսիլիա 25 Հոկտ.

Անգլիական Սուլթան զրահաւորն, որ Էսմիրնայի դիմացին կը տանի, երեկ Մարսիլիայէն մեկնելով Մալթա ելնաց։

Միահամ փաշան, որ այս օրերս Մարսիլիա կը գտնուի, այցելութիւն տուաւ երէկ Էսմիրնայի դիմին, և ձմեռը նաբոլի անցուցանելու դիտաւորութիւն ունի։

Վիեննա 26 Հոկտ.

Ֆրէյսբուրգեան Բոլիթիք լրագիրը կը ծանուցանէ, առանց ստուգութիւնը երաշխաւորելու, թէ Լորա Տէրպի խոստացեր է որ խաղաղութիւնը վերահաստատելու համար Անգլիա միջնորդութիւն ընէ Ռուսիոյ քով։

Նիւ-Եօրք 26 Հոկտ.

Զարհուրելի փոթորիկ մը Անթիլեան Քիւրասաօ կղզւոյն մէկ մասն աւերեց։ Եղած վնասը 75 միլիոն ֆրանքի կը հասնի։ 30 ալ մեռնող կայ։

Փարիզ 26 Հոկտ.

Մաք-Մահոն մարաջախտն այսօր խորհրդակցութիւն մ'ունեցաւ Ծերակուտի ժողովին նախագահ Օմիքրէ Բասքիէ դէպքին հետ։

Լոնտրա 26 Հոկտ.

Օսմ. Բօնս.		10
Փոխ.	1865	10 1/2
»	1869	10
»	1871	39
»	1872	18
»	1873	9 7/8
» Եգիպտ.		55 1/2
Անգլ. Բօնս		96 5/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ մայրաքաղաքիս անգղիական դեսպան Պ. Լէյյարտ Մեծ—Եպարքոսին ապարանքն երթալով տեսակցեցաւ Ն. Բարձրութեան հետ։ Յետոյ Մեծ-Եպարքոսը կայսերական պալատն երթալով Վեհ. Սուլթանին ներկայացաւ։

Զինուորական իշխանութիւնն հրամայեր զրկեց գաւառաց կուսակալներուն ու կառավարիչներուն, որ դրօշակի ներքև կոչուած ու երևոնին պահած մարդիկը փնտռելով դանեն ու զինուորութեան առնուն։

Մայրաքաղաքիս ոստիկանութեան ալ հրահանգ տրուեցաւ որ զինուորութենէ ազատ մնալու նպատակաւ մայրաքաղաքս փախչող գաւառացիներն ալ դանելով Սպարապետի դուռը զրկէ։

Յունական նէօլօգոս լրագիրը կը ծանուցանէ թէ Վեհ. Սուլթանին առաջին բժիշկ Տոքթոր Մավրոէնիի էֆէնտիի որդի Աղէքսանդր Մավրոէնի էֆէնտին՝ Վեհ. Սուլթանին հրամանաւ օտարազգու թերթեր ու գրուածներ թարգմանելու պաշտօնով արքունի պալատան քարտուղարութեան դիւանին անդամ անուաներ է։

Հինդշարթի առաւօտ ի հինգ խատի հրապարակը կախուած Պուլղարին վերայ հետևեալ տեղեկութիւնները կուտան մայրաքաղաքիս թուրք լրագիրք։

Յիշեալ Պուլղարն՝ որ Տէլի Եուվան կը կոչուէր, Եէնի-Պազարի ու Գընդանլըգի մէջ կատարուած անգթութեանց մասնակցելով՝ Իսլամ կանայք և մանկունք անխնայ ջարդելու և կոյս աղջիկներ բռնաբարելու խժդժութեամբ նշանաւոր եղած և Ապրիանուպոլսոյ պատերազմական տեղին առջև, ինչպէս նաև կ. Պոլիս բերուելէ ետև իւր դատաւորաց առջև համարձակ և կատարեալ պէս խոստովանած է իւր ըրած բարբարոսութիւնները։

Կարինէն Հոկտ. 11 թուով Լէվնթ Հերալտի ուղղեալ նամակ մը կը ծանուցանէ թէ Պայազիտի, Աշչկերտի և այլ գիւղերէից մէջ քիւրտերուն ըրած աւարառութեանց դումարն՝ ըստ հաշուոյ Օսմանեան իշխանութեանց՝ երկու միլիոն լիրայի կը հասնի. կորուստ մը՝ որ երկրին ուժերման և ժողովրդոց թշուառութեան պատճառ ըլլալէ զատ՝ նոյն իսկ տերութեան շահուն ալ մեծ վնաս կը բերէ։

Կը յիշեն ընթերցողք թէ անցեալ տարի նոյեմբեր ամսոյ մէջ Պէնկալայի ծովեզերաց վրայ սարսափելի փոթորիկ մը բրդելով ծովուն ալիքները 15 կանգուն բարձրացեր, և բազմաթիւ կղզիներ ծածկելէ զատ, գիշերանց Պէնկալայի ցամաքին վրայ քաղելով բիւրաւոր մարդիկ խեղդեր էր։

Այս սոսկալի դէպքին վրայ վերջէն եղած քննութեամբ ստուգուած է որ մեռնողներուն թիւը 165000 հոգւոյ կը հասնի. իսկ այս պատճառաւ այն երկիրը թողլով փախչող ժողովրդոց թիւն ալ 'ի միասին հաշուելով մէկ միլիոն մարդու կը հասնի, որով այն արդաւանդ երկիրն հիմա անմարդի անապատ դարձեր է։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ԷՍՀԱՄԸ ՈՒՄՈՒՄԻՆ

14 Հոկտ. ուրբաթ իրիկուն		10,33
15 Հոկտ. շաբաթ առաւօտ բացուեցաւ		10,34
Ժամ 6 ին		10,33
Բումպիի երկաթուղի	Ֆր.	31 25
Թղթադրամ	վր.	195

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Կ. Պոլիս 14 Հոկտեմբեր

Սօսիէթէ ժէնէրալ բաժ. Անգլ. վր.		3, 8
» Փոխանակութեան	»	2,10
Կ. Պոլսոյ Պանքային	»	3, 8
Քրէտի ժէնէրալ	»	3, 9
Քրէտի Օսմրո—Թիւրք	»	—
Փոխ. 1863	Ֆր.	53
» 1865	»	54
» 1869	»	50
» 1872	»	17 1/2
» 1873	»	48
Թրամուայ	Օսմ. վր.	1 10

ԱԶԳԱՑԻՆ

ԽՆԴԻՐ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

(Շար. Ե վերջ տես Թիւ 2036)

Եւրոպայի բարձրագոյն կրթութեան հաստատութիւններէն ազգովին օգուտ քաղել կարենալու համար՝ նախ և առաջ մեր ազգային վարժարանները կարգի դնելու ենք։ Պէտք է որ ազգը Պոլսոյ մէջ դէթ մէկ երկու այնպիսի վարժարան ունենայ, որք կարող ըլլան Եւրոպայի բարձրագոյն վարժարաններու համար աշակերտ պատրաստել։ Այդպիսի վարժարաններ ունենալը դժուար չէ։ Քանի մը տարի առաջ Ազգ. կրթութեան խորհուրդն ստուգած էր որ Պոլսոյ թաղային վարժարաններուն վրայ տարին մէկ միլիոն ղրշ ի չափ ծախք կրլլայ, բայց արդիւնքը ծախքին չհամապատասխաներ։ Կրթութեան խորհուրդն այլ և այլ տեղն առաջարկութիւն ըրած է Պոլսոյ թաղ. վարժարաններն աւելի արդիւնաւոր վիճակի մէջ դնելու. սակայն Ազգ. վարչութիւնը ցարդ չէ կարողացած 'ի գործ դնել զայն։

Այդ առաջարկութիւնն է՝ իրարու մօտ թաղերը միացնել, անոնցմէ մէկուն վարժարանը կեդրոնական վարժարանի և միւսներուն նախակրթական վարժարաններու վերածել։ Այս կերպով միացեալ թաղերը թէ՝ նախակրթական և թէ միջին կարգի վարժարանէ մը կունենայ՝ իրենց դրամական ծախսուց վրայ փոքրիկ դուռմար մ'աւելցնելով։ Նախակրթական վարժարանները կեդրոնական վարժարանայ համար աշակերտ կը պատրաստէին, կեդրոնական վարժարաններն մէկ երկուքին ալ դէպուր նպատակը կրլլար Եւրոպայի բարձրագոյն վարժարաններու համար աշակերտ պատրաստել։ Այդպիսի վարժարաններ ունենալը դժուար չէ։ Քանի մը տարի առաջ Ազգ. կրթութեան խորհուրդն ստուգած էր որ Պոլսոյ թաղային վարժարաններուն վրայ տարին մէկ միլիոն ղրշ ի չափ ծախք կրլլայ, բայց արդիւնքը ծախքին չհամապատասխաներ։ Կրթութեան խորհուրդն այլ և այլ տեղն առաջարկութիւն ըրած է Պոլսոյ թաղ. վարժարաններն աւելի արդիւնաւոր վիճակի մէջ դնելու. սակայն Ազգ. վարչութիւնը ցարդ չէ կարողացած 'ի գործ դնել զայն։

Այդ առաջարկութիւնն է՝ իրարու մօտ թաղերը միացնել, անոնցմէ մէկուն վարժարանը կեդրոնական վարժարանի և միւսներուն նախակրթական վարժարաններու վերածել։ Այս կերպով միացեալ թաղերը թէ՝ նախակրթական և թէ միջին կարգի վարժարանէ մը կունենայ՝ իրենց դրամական ծախսուց վրայ փոքրիկ դուռմար մ'աւելցնելով։ Նախակրթական վարժարանները կեդրոնական վարժարանայ համար աշակերտ կը պատրաստէին, կեդրոնական վարժարաններն մէկ երկուքին ալ դէպուր նպատակը կրլլար Եւրոպայի բարձրագոյն վարժարաններու համար աշակերտ պատրաստել։ Թաղերու միացման օգտակար և միանգամայն հոգեբարձութեան առաջարկութեան ցարդ չգործադրուելուն պատճառը միայն Ազգ. վարչութեան անփութութիւնը չէ, այլ և նոյն իսկ թաղեցւոց դժկամակութիւնը։ Ցաւանի է որ մեր վարչութեան իշխանութիւնը բարոյական է միայն. կարգադրութիւն մը կընէ և կ'սկսի յորդորել ժողովուրդը որ ընդունի զայն։ Եթէ ժողովուրդը կամ իւր անմիջական (թաղային) պաշտօնեայները համոզուած են այն կարգադրութեան կարևորութեանն ու օգտակարութեանը, կրնդունին, եթէ ոչ՝ չեն ընդունիր։ Դիցուք թէ վարչութեան կարգադրութիւնը շատ օգտակար և կարևոր է, և ինքն ալ անոր գործադրութեանը սրտի մաօք կը փափաքի. բայց ի՞նչ ընէ, երբ իր կարգադրութիւնները գործադրելու զօրութիւն չունի։ Իրաւացի առարկութիւն մ'է այդ, բայց սա ալ ճշմարիտ է որ այդպիսի պարագաներու մէջ փափաքն ու կամքը, հմտութիւնն ու յարատեւութիւնը մեծ գործեր կրնան տեսնել։ Երբ ժողովուրդ մը այնչափ զարգացած է որ կրնայ իր պէտքերը ինքնին ճանչնալ, վարչութեան շատ բան չմնար ընելիք. բայց կան ժողովուրդներ, որոցմէ մէկն է և Հայ ժողովուրդն, որք տակաւին իրենց պէտքերը ճանչնալու վիճակի մէջ չեն. այդպիսի ժողովրդոց վարչութիւնները մեծ դեր ունին խաղալիք, մեծ պարտքեր ունին կատարելիք։

* *

Ենթադրենք թէ միջին կարգի մէկ երկու վարժարան ունեցանք, ենթադրենք նոյնպէս թէ քանի մը աշակերտ ալ պատրաստուեցան (1) Եւրոպական բարձրագոյն վարժարանայ համար, բայց ո՞վ պիտի հոգայ անոնց ծախքը։—Ազգը։ Ո՞վ պիտի որոշէ ծախսուց քանակութիւնը, և ո՞վ պիտի հաւաքէ սակը։—Ծախսուց քանակութիւնը որոշելը Ընդհ. ժողովոյ գործն է, սակը հաւաքելն ալ վարչութեան։ Լաւ, բայց ազգային իշխանութիւնն իր որոշումները, իր դրած օրէնքները գործադրելու զօրութիւն չունի. ազգն ալ այժմ հազիւ կրնայ իր Պատրիարքարանի ծախքերը հոգալ։—Ուրեմն պէտք է մասնաւոր ընկերութիւն մը կազմուի (2), որուն միակ նպատակն ըլլայ չքաւոր պատանիներ խրկել Եւրոպայ բարձրագոյն կրթութեան համար։ Պոլսոյ մէջ գտնուած երևելի ազգայինք, մանաւանդ անոնք որ զաւակներն արդէն Եւրոպա զրկած են կամ զրկելու դիտաւորութիւն ունին, պէտք է գործին դլուխ կանգնին։ Եթէ ընկերութեան հիմնադիրներն ազգին մէջ վարկ և պատիւ ունեցող անձինք և անոր սնուցիչն ապահով ձեռքեր ըլլան, գործը կը յաջողի։ Ընկերութիւնը յարմարագոյն տեղ մը կընտրէ Եւրոպայի մէջ, և կը յայտարարէ թէ թոշակաւոր աշակերտներ ալ կընդունի հոն իր խնամակալութեան ներքև։ Տաճկատանէն Եւրոպա դնացած և ասդին անդին ցրուած Հայ աղայք մէկ տեղ կը հաւաքուին, մասնաւոր ազգային խնամոց և հսկողութեան ներքև կը դրուին։ Այս կերպով ոչ միայն ծնողաց ծախքը մեծապէս կը թեթևնայ, և աշակերտաց ալ յառաջադիմութիւնը, առողջութիւնն ու վարքը կապահովի, այլ և թոշակաւոր աշակերտաց մէկ տեղ հաւաքուելովը կարելի կըլլայ քանի մը չքաւոր աշակերտ ալ կրթել։ Մեզ այնպէս կը թուի որ եթէ տասն աշակերտ ըլլայ տարին առ նուազն 60 ոսկի (բոլոր ծախքերը մէջը) վճարող, կարելի կըլլայ երկու աշակերտ ալ ձրի ընդունիլ։

---

(1) Խօսքերնիս չքաւոր աշակերտաց վերայ է։

(2) Զորօրինակ «Խարայէլեան Տիեզերական ընկերութեան» նման, որ հաստատուած է 1860 ին և որուն կեդրոնատեղին է Փարիզ։ Այդ ընկերութեան նպատակն է Ա. ընդհանուր Հրէից յառաջադիմութիւն. Բ. հալածելոց պաշտպանութիւն. Գ. ընկերութեան նպատակին ծառայող հրատարակութեանց քաջալերութիւն։ Տարեկան բաժինն է վեց ֆրանք. ընկերութիւնը նուէր ալ կընդունի։ Տասը բաժանորդ գտնուած տեղը «Տեղական Մասնաճիւղ» կը կազմուի։ Ընկերութեան կանոնագրութիւնը շատ խելացի և գործնական է, և ընկերութիւնը մեծամեծ ծառայութիւններ կը մատուցանէ Հրէից ազգին։ Իր նպատակն ընդարձակ և բազմակողմանի է. մենք կը ընդունինք մերինը ամոր վրայ ձևել՝ նպատակը չափաւորելով։—Ուրիշ անդամ կը ջանանք ընդարձակ տեղեկութիւն տալ այս նախանձելի ընկերութեան վրայ։

նել։ Եթէ ընկերութիւնն ալ առջի բերան երկու երեք աշակերտի ծախքը հոգայ, կըլլայ 4–5 աշակերտ։ Փոքր սկզբնաւորութիւն մը՝ որ կըրնայ երթալով մեծնալ, եթէ քիչ մը եռանդ և յարատեւութիւն ունենանք։

* *

Եւրոպայի մէջ առանձին ազգային վարժարան հաստատելու բնաւ պէտք չկայ։ Հայ ուսանողները պէտք է միայն բնակարան մ'ունենան, ուր դասախարակի մը հսկողութեան ներքև ապրին, դասերնին պատրաստեն, և տեղւոյն ցերեկեայ վարժարանները յաճախեն։ Իւրաքանչիւր աշակերտ իր ապագայ կոչմանն ու զարգացման աստիճանին համապատասխանող վարժարան մը կը դրուի։ Այս կերպով Հայ ուսանողը տեղւոյն ամեն տեսակ վարժարաններէն ալ օգուտ կը քաղէն, և այն ալ՝ համեմատաբար քիչ ծախքով։

Եւրոպայի բարձրագոյն վարժարանները, նա մանաւանդ համալսարանները, ինչպէս և այն միջին կարգի վարժարաններն, որ բարձրագոյններուն համար աշակերտ կը պատրաստեն, գիշերօթիկ չեն (բաց 'ի Փարիզի Լիսէներէն)։ Եւրոպայի ամեն կողմերը կան թէև շատ մը մասնաւոր գիշերօթիկ վարժարաններ՝ գլխաւորապէս օտարականաց համար բացուած, բայց մեծաւ մասամբ հասարակաց միջին կարգի վարժարաններէն անգամ ստորին են։ Յաճախ օտարական աշակերտք այդ մասնաւոր վարժարանաց մէջ տարիներ և հազարաւոր ֆրանքներ վատնելէ ետք՝ չեն կարող բարձրագոյն վարժարան մտնելու քննութիւն տալ, և կը պարտաւորին մասնաւոր վարժարանը թողուլու 2–3 տարի ալ հասարակաց վարժարան մ'երթալու քննութեան պատրաստուելու։

Արդ՝ բարձրագոյն կրթութեան համար Եւրոպա գնացող պատանեաց, ինչպէս և անոնց ծնողաց ու ազգին օգուտը կը պահանջէ որ նոքա (պատանիք) կամ տակէ լաւ պատրաստուած երթան, կամ եթէ բաւական պատրաստուած չեն, հասարակաց գէջէն կարգէ վարժարաններու մէջ պատրաստուին հան, և ոչ թէ մասնաւոր վարժարանաց մէջ։ Եւ որովհետև հասարակաց վարժարանները գիշերօթիկ չեն, ուստի պէտք է որ Հայ ուսանողներն իրենց համար առանձին օթևան ունենան, ինչպէս որ վերը բացատրեցինք։ Եթէ ուսանողը լաւ պատրաստուած ըլլան և ուզղակի բարձրագոյն վարժարան կամ համալսարան մտնեն, դարձեալ 'ի հարկէ առանձին օթևանի պէտք պիտի ունենան։ Մեր առաջարկած այդ օթևանն ազգային կըլլայ դրութեամբ, քանի մը հազար ֆրանք կը շահին ծնողք, զաւակները քանի մը տարի կը վատնեին, աւելի հիմնաւոր գիտութեան տէր կըլլան, և շատ մը փորձանքներէ զերծ կը մնան, միանգամայն քանի մը չքաւոր և ընդունակ պատանիք ալ բարձրագոյն կրթութիւն կ'ստանան ձրիաբար և ազգին օգտակար պաշտօնեաներ կըլլան։

Հ. Ի.

. . . Լ.Ֆէնոտ.

Վարժարանիս աշակերտներէն Օր. Զապէլ Խանճեան՝ Ամեն. Յ. Պատրիարք հօր կենդանագիրն գծած և Նորին բարձր Սրբազնութեան նուիրած ըլլալով, շնորհակալութեան քաջալերութեան դիր մ'ընդունած է, որոյ պատճէնը Ձեր մեծապատուութեան ղրկելով կը խնդրեմք որ զայն ձեր վաղեան թերթով հրատարակել բարեհաճիք 'ի քաջալերութիւն նոյն օրիորդին և իւր ընկերակցաց։

12 հոկտ. 1877 Մնամք խորին յարգակ. Ներ—թագ դանօք

Ի դիմաց հոգաբարձութեան

Ատենադպիր Ատենապետ

Գ. Ց. Մելէտ Կարապետ Զրաֆեան

«Համեստափայլ Օրիորդ Զապէլ Խանճեան աշակերտուհի բարեկարգ երկսեռ վարժարանի 'ի Ճեմարան

Յիսկիւտար

«Օրիո՛րդ.

«Մեր կենդանագիրն գծագրելով մեզ ընծայեր էք. գոհութեամբ ընդունեցի ձեր ընծայն, և գեղարուեստից մէջ ձեր ըրած յառաջդիմութիւնը մեծ ուրախութիւն պատճառեց ինձ։

«Անձամբ ալ տեսած էի դպրոցիդ և ձեր բարդաւաճումը այն ամեն ուսմանց մէջ որք ձեզ կաւանդուին։

«Կը մաղթեմ Աստուծմէ որ իւր շնորհքն բազմապատկէ 'ի ձեզ և յընկերուհիս ձեր, և ձեր վրայ հոգատանող պատուարժան քահ. խորհրդոյ և հոգաբարձուաց և վարժապետաց կարողութիւն եւ զօրութիւն պարգևէ։

Աղօթարար

1877 հոկտ. 5 Պ. Կ.

Ի Պարիզ Հայոց ՆԵՐՍԷՍ

'Ի Կ. Պոլիս ԱՐԲԻԵՊԻՍԿՈՊՈՍ

ՍՍՈՑ ԿԹՈՂԻԿՈՍԻՆ ԿՈՂՄԷ ԴՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԸ

(Շար. թես. Ի։– 2038)

Դ. Կը կրկնէք ձեր հարցումները, «ի՞նչ կընէք և ի՞նչ պիտի ընէք» ըսելով. — Ի՞նչ պիտի ընէ, խեղճ ու անակէր Կիլիկիոյ թշուառութեանց վրայ ձեռք 'ի ծնօտս անվախիմար կուլայ ու կողայ Խորենացի ծերունւոյն նման. ի՞նչ պիտի ընէ, Պատրիարքարանն ինչ որ հրամայէ զայն պիտի կատարէ, վասն զի աղատ չէ որ՝ ինչ որ ազգութեան և մանաւանդ թշուառ Կիլիկիոյ նպաստաւոր է, և ինչ որիւր բարձր կոչման պարտ ու վայելուչ է, զայն ընէ. այլ ազգային Պատրիարքարանի և վարչութեան բարձր հրամանաց և կամաց առջև իւր տկար պարանոցը խոնարհեցընելէ զատ բան մը չունի բնաւ։

Ե. Տարօրինակ դիտողութիւն մ'ալ կընէք իւր թէ Վ.Հ. Սրբազան Տէրը երբեմն սրամտելով իրեն պարզ վարդապետ Երուսաղէմի անտարբեր կը մնայ եղեր. երբեմն քահանայ ձեռնադրելու համար Էջմիածնի եպիսկոպոս կըլլայ եղեր, և երբեմն ալ «ես Կաթողիկոս եմ, ո՞վ կըրնայ այս ասպիճանը իմ վրայէս առնել» կըսէ եղեր, և այն ալ առանց Կաթողիկոսութիւն ընելու, և առանց այն Նրա. Նաչնորհ Հայրապետաց և բարեյիշատակ թագաւորաց ամրոցը—Սիս մայրաքաղաքը—Հայոց ազգին առաջին և վերջին ապրնկալութեան, պայծառութեան եւ յուսոյ և փառաց նշանակէտը չեն և պայծառ պահելու։» Ի հարկէ ո՞վ որ կարդայ Ձեր այս դիտողութիւնները, զարմանալեօք կամ պիտի խնդայ և կամ պիտի ցաւի, քանի որ ազգային մի բարձր պաշտօնատուն մը Կիլիկիոյ Վ.Հ. Կաթողիկոսի մը գրած է զայս, և ո՛չ թէ հնակարկատ Գասպարին։ Կերևի թէ Պատրիարքարանն իւր այս դիտողութեամբը Վ.Հ. Սրբազան Հօր գործածած սատրպրութիւնը ակնարկել կամ լաւ ևս հեգնել կուզէ։ Սոյգ է որ Վ.Հ. Սրբազան տէրը իւր սատրպրութիւնը «Վարդապետ Ս. Երուսաղէմի, Եպիսկոպոս Էջմիածնի և . . . Կիլիկիոյ» կը դնէ. և այս չէ թէ հեղնութեան ասիթ մը տալու համար, այլ ճիշդ իրեն վարդապետութեան Ս. կարգը 'Ի Ս. Երուսաղէմ, եպիսկոպոսութիւնը 'Ի Ս. Էջմիածին, և կաթողիկոսական Ս. կարգն ալ 'Ի Ս Աթոռն Կիլիկիոյ ընդունած ըլլալուն համար. ասկէց կարող է բաւական օգուտ և խնամք քաղել ողջմտութեամբ քննադատողը. ոմանք՝ Երուսաղեմէն եղած ըլլալը խծբծելով հաւատակասկրութեամբ «ուխտադրուժ» անուանած են. ոմանք՝ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, կամ լաւ ևս՝ ազգին կամքն և որոշումը յարգած ըլլալուն համար «ընդվզեալ, ապահակ» և այլ ո՛չ թէ կղերական Ս. կոչման, մարդկութեան անդամ անվայել թշնամական բառերով իրեն հերձեալ ոմն ցոյց տալ ճղներ են իրենց վեհանձնութեամբն հանդերձ ապահի ապրելոց և ապանց. և ահա ասոնց նման անսանձ և թունալի լեզուները կարկելու նպատակաւ կը դնէ անանկ սատրպրութիւն մը, որ առանց խարութեան ազգին երեք նշանաւոր և մեծ ամիսոց վրայ իւր ունեցած սէրն ու համակրութիւնը յայտնէ այն ամեն մէկ յանդէպս դայթակղեալ պարզ և բարեպաշտ անձանց, և կարծեմ թէ կարդասութեան մասին ասանկ պատահմունք մ'ալ շատ հաղուագիւտ է ազգիս կղերականութեան մէջ, վասն զի Նորին Վ.Հ. Սրբազնութիւնը սարկաւագութեան և կաթողիկոսութեան Ս. ասպիճանները 'Ի Ս. Աթոռն Կիլիկիոյ, վարդապետութեան և մասնաւոր իշխանութեան 'Ի Ս. Երուսաղէմ, ծայրագոյն իշխանութեան և եպիսկոպոսութեան Ս. ասպիճաններն ևս 'Ի Ս. Էջմիածին ընդունած է. և այս իսկ է բուն պատճառը յիշեալ սատրպրութեան, հա՛յր պատուական, և ո՛չ անանկ յանիրաւի խծբծանաց և սարսռելի մեկնութեանց տեղիք մը տալու համար։

Իսկ այն՝ քահանայ, վարդապետ և միանգամայն եպիսկոպոս ձեռնադրելու մասին, որուն համար ևս քաշքշել ուզեր է, Նէջիպ էֆէնտի թող չընեն մայրաքաղաքիդ ձեռնադրութեան բարձրագոյն բարձրաստիճանաւորները. արդէն Նորին Վ.Հ. Սրբազնութեան դրութեան և բնութեան հակառակ է շուտափոյթ ձեռնադրութիւն ընելը, մինչև որ զանազան փորձերով մէկու մը հոգին չքաղէ՝ անկարելի է որ ձեռք դնէ անոր վրայ։ Այս մասին իրմէն քահանայութեան Ս. ասպիճան ընդունողներէն հասկնալու է. տասն և եօթ տարին անցած է եպիսկոպոսութիւնը, մի միայն գնուատոս ձեռնադրած է վարպապետ, քովը տասն տարի ծառայելէս ետքը, և ոչ դայլ ոք, և ահա կաթողիկոսութեանն ևս վեցերորդ տարին կըլրանայ յաջորդ ամսոց մէջ և միայն գՏէվլէթեան վարդապետն ձեռնադրած է եպիսկոպոս, և այն ալ սա խօսքով թէ «գիտեմ որ Յակոբ վարդապետ եպիսկոպոսութեան պէտք եղած հանգամանքները լիովին չունի, բայց ուրիշ շատ մը փափաքողներուն մէջ ասկէց արժանաւորը չեմ տեսնար, և Տէվլէթեանը՝ եթէ աղդին շատ օգուտ մ'ալ չունենայ, գոնէ այրոց պէս դժուութեան, երկպառակութեան, դայթակղութեան ևայլներու առիթ և օրինակ չիրնար ըլլար իւր անկարողութեանմը» և այս վեց տարուան մէջ միայն վեց քահանայ ձեռնադրած է, երեքը Այնթապի համար նուաստս հետ, մէկը Կարսանու համար, և երկուքը Կիլիկիոյ վիճակներէն գուրս գիւղերու համար, այն տեղերը եպիսկոպոս չգտնուելուն և կարի պէտք ունենալնուն առթիւ, և այն ալ խիստ թախանձելոցին. ահա այս պատմութենէս կրնայ հասկցուիլ թէ անանկ կարծուածին համեմատ քահանայ ձեռնադրելու կամ ամենարարձր պաշտօններու հասնելու և կամ նիւթապէս օգուտներ քաղելու փափաքանօք և նպատակաւ Էջմիածնի եպիսկոպոս ձեռացողներուն կարդէն չէ Նորին Վ.Հ. Սրբազնութիւնը, և երբէք ալ չընդունիր այնպիսի տարախորհուրդ մեկնութիւններ . . .։

Գանք որ Սիս երթալու և այն նուիրական տեղը չէն պահելու մասին ևս պէտք եղած բացատրութիւններն ալ զէր. եղած Հանգամանքները լիովին ծանօթ են Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, որ նոյն բացատրութիւնն յերկուս կը կայանայ, առաջին Վ.Հ. Սրբազան հոր կենաց ապահովութիւնը, և երկրորդ՝ Սոյ վանուց նիւթականին կարգադրութիւնը. այս երկու կէտերը 'Ի Պատրիարքարանէն երաշխաւորուելուն պէս պատրաստ է Նորին Վ.Հ. Սրբազնութիւնը անմիջապէս ուղևորիլ 'Ի Սիս։ — Ի վերջոյ ի խորոց սրտի հառաչմամբ ճշմարիտ գլխոյն եկեղեցւոյ Յիսուսի փրկչին մերոյ կաղաչէք, որպէս զի ասկի ուռամբ կրկին այցելութիւն մ'ընէ. չհասկցուիր թէ ոյն ազգասէր ինչ ըսել ուզուած է. միթէ՞ առաջին այցելութիւնը հնացած կամ անպօրացած ըլլալո՞ւն, թէ ոչ՝ այս անգամ ալ ուրիշ պատշաճաւոր տեղ այցելելու համար է այդ ջերմեռանդ խնդրուածքը. ի՞նչ որ ալ ըլլայ, մեք ատոր հակառակը՝ ոչ թէ ասկի ուռամբ, այլ խարտանեաց չուանաւ փութալու շնորհը կը մաղթեմք ամենայն թախանձանօք, որ իւր այս ընտիր և սիրելի հօտին անհարազատ միակտպաշտան ուազակները հերքելով ու հալածելով մաքրէ, սրբէ ու բարեկարգէ իւր ուղղափառ Ս. եկեղեցին։

Շիտակը, այս քանի մը խնդրոց կարգադրութեանը համար շատ կը փափաքի Նորին Վ.Հ. Սրբազնութիւնն ինքնին ուղղակի գալ 'Ի մայրաքաղաքս, բայց երկու գժուարին կէտեր յետոյ կը կասեցուցեն զինքը իւր այս մտադրութենէն. առաջին՝ արդի քաղաքականութեան խառնաշփոթութիւնը, երկրորդ՝ մտածելով թէ Պոլիս գալով առ ո՛վ պիտի դիմէ. քանի որ իւր դատախազն ու միանդամայն դատաւորը Ազգ. Պատրիարքարանը և վարչութիւնը կը նկատէ, դատաւորութեան և դատախազութեան պաշտօնները միևնոյն մարմնոյ մը վրայ տեսնուած տեսն՝ ի՞նչպէս կը համարձակի մարդ մ'այնպիսի մարմնոյ մը հետ 'Ի դատ մտնել և արդարութիւն ակնկալել. ուրեմն առ այժմ կը յանձնէ այն ամենը երկնային արդարադատ և անդառնալի վճռաբանութեան, և միայն բարեմաղթու կը լինի Ձեր Սրբութեան և համայն ողջամիտ ազգայնոց անդին կենաց համար։

Եւ նուաստս խորին մեծարանս մատուցանելով Ս. հօրդ,

Մնամ աղօթակից

Ձեռնասուն

21 սեպտ. 1877 Ն. Վ.Հ. Սրբազնութեան

Ի Մարաշ Ներսէս Ծ. վրդպ Մանէսալեան

ԻԼԱՆ

Ղաքիրի Շահանէ Սարաճխանէ անպարբնա Տարը Շուրատա մահֆուզ պուլունան նումունէսի վէճճ իլէ միապայտա օլունաճադ օն պլին գըլէ իզմիտ իմաղի սիեահ եադլը քէսսէլէնին թարիխի գանթրաթաէն իթիպարէն պէհէր մահ պէշէր պլին գըլեսի թէսլիմ օլունարադ իքի մահտէ արգասը արընմաք վէ պահասը մադպուզ սէնէալերի թարիխինտէն իթիպարէն օթուզ պ·ր կիւն միրուրինտէ սիմ մէճիտիյէ երիկիրմի ղրուշա վէ մէճիտիյէ ղերիվմէզսէ Պօրսա ֆիլամը իլէ պիլ հիսապ ֆարդը իլէ պերապեր գայիմէ օլարադ վերիլմէք շարթը իլե· պէհէր գըլեսի երիկիրմի այլը պուլուգ դուրուշա թալիպի էօհտէսինտէ օլուպ թըշրինի էվվելը բումինին օն եէտինճի փադար երթէսի կիւնի գարարը գաթիսի վերիլեճէյինտէն, իմա իմմէյէ թալիպ օլանլարը եէվմի մեղբիւրատէ Տարի Շուրայի ասքերիյէ կելմելերի։

13 թըշրինի էվվել 1877 4

Պապը Սէրասքէրի

Ղաքիրի Շահանէ ըվվազիմաթը իշիւն միլթահիւտլերի թարաֆընտան գանթրաթ օլերինէ մահսուսլէն էլպիսէ անպարբնա կէօթիւրմէքտէ օլուուգ-լարը հէր նէմի չուհա վէ սայիրէտէն Էվրօփատան վիրուա իտէճէ-բլերին կէօմրիւկոէն իսրաճընտա պալեալերի աչբմայատարագ կէօթիւրիւլուպ անպարբնատա անպար մէմուրը վէ մուսայէնէճիլեր հաղբը օլաուզու հալտէ էմանէթ մադազասընտա քիչատ իտիրմէսի, վէ չայէտ իչլերինտէ աչբդ պօղուդ պալեա զուհուր իտէրսէ դապալ օլունմասը, վէ մէղբիւր էմանէթի մադազասընտա սալիֆ էղդիբը մէմուրլեր հաղբը օլմասը քիչատ թիճճարտէն գաթիէն մադազայա տուխուլ իտիրմէսի, վէ իչպու չուհա վէ սայիրէ մէմուրինի միւմայիլէյհիւմ մուվաճէհէսինտէ անարիզ իտիրմէսի քճէ անպարբ մախսուսէ վաղ գելընմասը գասիմէն պէրու ուսուլը միթթէխէզէսի իճապընտան օրմապլէ՝ քէյֆիյէթ միւթէահիւտին մալիւմլերի օրմագ լազբէ իլան վէ իչայէ օլունմըշ տբը։

4 Թըշրինի էվվել 1877

Պապը Սէրասքէրի

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ
ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
Ի Մարսէ-Վալտէա, Հոնդբրէա և Ի Լեհասպան
Ուղևորութիւն յամին 1876
Արշակայ Մ. Աթուռեան

Ամեն հայ գրավաճառաց քով կը գտնուի։ Գին 3 քառորդ թղթադրամ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԻՆ ՍԵՐԱՍՏԻՈՅ
Եւ անոր կուսակալութեան ներքև գըտնուող մեկ քանի գլխաւոր քաղաքաց
Գրեաց Պօղոս Վարդապետ Նշանեան

Ամեն հայ գրավաճառաց քով կը գտնուի. գին 1 1/2 ֆրանք։

ՔԻՆԱ ԼԱՌՕՇ

Օդերուն ջերմութեան ժամանակ՝ Քինա Լառօշի Էլիքսիրը ջրոյ հետ խառնելով ստամոքսի և աղեաց ուժ կուտայ զովացնելով, մինչդեռ խմորեալ հեղուկներն ու շուրսպները կը տկարացնեն՝ առանց ծարաւն անցուցնելու։

Ամեն դեղավաճառաց քով կը գտնուի։



ՋԵՐՄԻ ԴԵՂ

Տոքթոր Այերի ջերմի դեղը ամեն ո և իցէ տեսակ ջերմ իսկոյն կը բժշկէ. չկայ դեղ մը որ ասոր չափ օգտակար ըլլայ ջերմի. ջերմ բռնողները պարապ տեղը կը տանջուին քանի որ աս դեղը կայ, պէտք է որ անմիջապէս անկէ գործածեն։ Արդէն Պօլսոյ և դաւառներուն մէջ ճանչցուած է աս դեղը ու պնով բժշկուողները գիտեն անոր յարգը։ Նախ ուրբը տրամի չափ հէնդ ե-ոչ խմելու է իբրև մաքրողական դեղ ու ետքը աս ջերմի դեղէն (ջերմը չբռնած) օրը չորս անգամ մէյմէկ անուշի դրդալ ջուրի հետ խառնելով խմելու է, անմիջապէս կանցնի։ Տղայոց աւելի քիչ տալու է. կը ծախուի կ. Պոլիս Դալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։



ԱՆԿՈՂՆԱՐԱՆ ԿԱՄ ՄԱՀՃԱԿԱԼ

Աղնիւ և հասարակ քարեօլաներ երկաթէ և արոյրէ, աժան գիներով կը ծախուի, կ. Պոլիս Դալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։



ԱՐԴՈՒԿ

Այս ձև իւթիւներուն ամենէն աղէկ տեսակը որուն մէջ կրակը չը մարիր և աղէկ կը գործէ, կը ծախուի կ. Պոլիս Դալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1877 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1 ՇԱԲԱԹ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՀՈԿՏԵՄԲԵՐ 31

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժամ	Բոփորէն ելնող շոգենաւները
1 15	Եկենիսահալլէն, Մկ. Պէյիւք. Թարապ. Եկնիք. Սմիւն. Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Օրթաք. Պէշիկ։
1 30	Արնավուտքէյէն, Գուրուչ. Օրթաք. Պէշիկ. Դապաթ.
1 30	Պէյքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյ. Գուզկ.
2 30	Եկենիսահ. Մկզարպ. Պէյիւքա. Թարապ. Եկնիք. Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավուտ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ, Գապաթաշ։
2 30	Պէյքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Վանիք Զէնկ. Պէյ. Գուզկ.
3 30	Ր. և Ա. Գավազէն, Եկենիս. Մկզարպ. Պէյիւքա. Թարապ. Եկենիքէյ, Սմիւն. Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Գուրուչէշմէ, Օրթաք. Պէշիկթաշ։
4	Պէյիւքա. Թարապիա, Պէյքօզ, Բաշապ. Բիքթաթ փաշա մահ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկէր. Պէյէր. Գուզկունճուք։
5 30	Եկենիս. Մկզարպ. Պէյիւքա. Թարապ. Եկնիք. Էմիրկ. Պոյաճ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Օրթաք. Պէշիկթաշ։
6 30	Եկենիս. Պէյիւքա. Թարապ. Պէյքօզ. Եկենիք. Էմիրկ. Գանլ. Ր. և Ա. Հիսար, Գանտ. Արնավ. Զէնկ. Պէյ. Օրթաք. Գուզկ. Պէշիկ. Իսկիւտար։
8 15	Ա. և Ր. Գավազէն, Մկզարպ. Պէյիւքա. Թարապիա, Պէյքօզ, Եկենիք. Սմիւն. Պոյաճ. Ր. Հիսար, Արնավուտք. Գուր. Օրթաքէյէ, Պէշիկ։
8 45	Պէյիւքա, Պէյքօզ, Բաշապ. Բ. փաշա մահ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյ. Գուզկ. Իսկ։
9 45	Եկենիսահ. Պէյիւքա. Թարապ. Եկնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Օրթաք. Պէշիկթաշ։
11	Մկզարպ. Պէյիւքա. Թարապ. Եկնիք. Էմիրկ. Արնավ. Օրթաք Պէշիկթաշ։

Կոմուրջէն ելնող շոգենաւները

2 15	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Պոյաճ. Եկենիք. Թարապ. Պէյիւքա.
2 30	Գապաթաշ, Իսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթաք. Պէյ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ա. և Ր. Հիսար, Գանլ. Էմիրկ. Եկենիք. Պէյքօզ, Թարապ. Պէյիւքա. Եկենիսահ.
3 30	Պէշիկթաշ, Օրթաք. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկէն, Սմիւն. Եկենիքէյ, Թար. Պէյիւքա. Մկզար. Եկենիսահ։
4 30	Իսկիւտար, Գուզկ. Պէյ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Ր. փաշա մահ. Բաշ. Պէյքօզ, Պէյիւքա.
5 15	Պէշիկթաշ, Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկէն, Եկենիք. Պէյքօզ, Թար. Պէյիւքա. Մկզ. Ր և Ա. Գավազ։
7	Իսկիւտար, Պէշիկ. Գուզկ. Օրթաք. Պէյ. Զէնկ. Արնավ. Պէպէք, Ր Հիսար, Էմիրկ. Եկենիք. Պէյքօզ, Թարապ. Պէյիւք. Եկենիսահ.
9	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ. Ր. Հիսար, Պոյաճ. Եկենիք. Թարապ. Պէյիւքա Մկզար.
10 30	Պէշիկթաշ, Օրթաք. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկէն, Եկենիք. Թարապ. Պէյիւքա. Մկզար. Եկենիսահ Գավազներ։
10 30	Գուզկունճուք, Պէյ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Ր. փաշա մահ. Բաշապ. Պէյքօզ, Թարապ. Պէյիւք։
11	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկէն Սմիւն. Եկենիք. Թարապ. Պէյիւքա։
11	Գապաթաշ, Գուզկ. Պէյ. Զէնկէր. Վանիք. Ա. Հիսար, Գանլ. Բաշապ. Պէյքօզ։
11 35	Պէշիկթաշ, Գուզկ. Օրթաք. Պէյ. Զէնկ. Արնավ։
12	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ։

ԻՍԿԻՒԻՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Իսկիւտարէն Կոմուրջ. Ժամ	Կոմուրջէն Իսկիւտար. Ժամ	
1 30	6 35	
2	8 15	
2 30	8 40	Պէշիկթաշ
3	9 15	
3 30	9 45	
4	10 5	
4 30	10 25	
5	10 50	
5 30	11 10	
6	11 30	
	12	

Կոմուրջէն Իսկիւտար. Ժամ	Իսկիւտարէն Կոմուրջ. Ժամ	
1 45	8	
2 10	8 30	
2 45	9 5	
3 15	9 30	
3 40	10	
4 15	10 25	
4 45	10 50	
5 10	Գչքթ. 11 10	
5 45	11 25	
6 25	11 35	
	12 5	

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Իսկիւտարէն Կոմուրջ. Ժամ	Կոմուրջէն Իսկիւտար. Ժամ	
1 45	8	
2 30	8 40	Պէշիկթաշ
3 15	9 20	
4	10	
4 40	10 30	
5 15	11	
6	11 30	
6 35	12	

Կոմուրջէն Իսկիւտար. Ժամ	Իսկիւտարէն Կոմուրջ. Ժամ	
1 45	8	
2 30	8 40	
3 15	9 20	
4	10	
4 40	10 35	
5 10	Գչքթ. 11 5	
6	11 35	
6 35	12 5	

Այս լրագիրը չաբաթը երեք անգամ կը հրատարակուի, երկշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը։ Բաժանորդագրութեան տեղերն են Դալաթիա Սանտրքճիլար ճատաէսի թիւ 198, Դօրօ խան Մասիսի խմբագրատունը։

Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց սենեակները։

ԻԶՄԻՐ. Պետրոս աղա Տէպէեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Թորոսի Է Գ. Էսկիճեան.
ՊՐՈՒՍԱ. Պետրոս աղա Թանկէրեան.
ԹԷՔԻՐՏԱՂ. Յովակիմ աղա Ալզուն-արդեան.
ՏՐԱՊԻԶՈՆ. Խաչատուր բաղաէրմասեան
ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Զաքարեան.
ՎԱՆ. Կարապետ աղա Նաթանեան.
ՄՈՒՇ. Մկրտիչ աղա Փոթիկեան
ԵԱՇ. Մ. աղա Խաչիկեան.
ՖՈՒՇԱՆ Ֆէրհատ աղա Ա Ֆէրհատեան
ԵՐԶՆԿԱՑ. Թադէոս աղա Բաղբատունի։
ՍԻՎՐԻՀԻՍԱՐ. Մրժ. Ջ. Ռուբէն.

Ուրիշ քաղաքներէ ստորագրուիլ ուզողներն աս տեղերէն մէկուն հետ կրնան թղթակցիլ։

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ
ԴԱԼԱԹԻԱ ՆՕՐՕ ԽԱՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

NORTH BRITISH AND MERCANTILE INSURANC COMPANY
ՆՕՐԹՀ ԳԻՒԹԻՆ ԵՆՏ ՄԷՐԳԷՆԹԱՑԻ
Լոնդրայի և Լիվերպուլի ապահովութիւն
ընկերութիւն Անգ. Լիր.
Բաժանորդագրեալ դրամագլուխ 2,000000
Վճարեալ դրամագլուխ 250,000
Պահեստի դրամ հրդեհի ճիւղէն զատ եալ 1,040,744—1,290,744
1875ին հրդեհի զուտ հասոյթը 917,178

NORTHERN ASSURANCE COMPANY
ՆՕՐԹՀԸՐՆ
Լոնդրայի և Լիվերպուլի ապահովութիւն
ընկերութիւն Անգ. Լիր.
Բաժանորդագրեալ դրամագլուխ 3,000000
Վճարեալ դրամագլուխ 150,000
Պահեստի դրամ հրդեհի ճիւղէն զատ եալ 380,000—530,000
Զուտ հասոյթ 1875ի 351,000

Ստորագրեալք իրենց բազմաթիւ յաճախորդաց և այս քաղաքիս ընդհանուր հասարակութեան կը ծանուցանեն որ իրենք վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրութեան մը մէջ կը գտնուին, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանեն։

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելնալովն՝ ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բռնողներու ինքզինք ներկայացունել։

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնք կրնան ընդունուիլ ինչպէս Բերայի Դալաթիոյ և Պօլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները գիւղերը և գաւառները։

Գիներուն և աւելի մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել Միացեալ ընկերութեանցս գրասենեակը Դալաթիոյ Բէրշէմպէ բազարի մօտ Կրավանի խան թիւ 5։

Լիազօր գործակատար
Մ. Դ. ՍՈՒԱՆ